

Ինտերնետային առևտրի ՄԻ ՔԱՆԻ ԿԱՆՈՆ, որոնք կօգնեն խուսափել համացանցում զեղծարար կայքերից.

- ✓ Համացանցում գնումներ կատարեք միայն վստահելի խանութներից;
- ✓ Գնում կատարելուց առաջ կարդացեք կարծիքներ խանութի մասին;
- ✓ Համոզվեք, որ կայքը գրանցվել է ոչ պակաս քան մեկ տարի առաջ: Առաջարկում ենք ստուգել կայքի գրանցման վաղեմությունը <https://www.nic.ru/whois/> կայքի միջոցով;
- ✓ Կայքում պետք է գրանցված լինեն խանութի կոնտակտային տվյալները՝ հասցե, հեռախոսի համար, էլեկտրոնային հասցե, ապրանքի առաքման և հետվերադարձի մանրամասն տեղեկություն;
- ✓ Խոշոր գնումներ կատարելիս ցանկալի է նախապես կապ հաստատել խանութի հետ;
- ✓ Հավատացեք միայն խելամիտ զեղչերին;
- ✓ Ուշադրություն դարձրեք կայքի հասցեին, շատ հաճախ զեղծարարները փոփոխում են իրական կայքերի անվան մեջ մեկ-երկու տառ;
- ✓ Գնումներ կատարեք միայն պաշտպանված կայքերից, որոնց հասցեն պետք է սկսվի **https** տառերով: